ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Որպէս Հայ Մանրանկարչութեան Մեծ Հովանաւոր

Կիլիկիայի Հայ իշխանութիւնը, որ հաստատուել էր Բագրատունեաց անկումից յետոյ, հետզհետէ զօրանալով՝ արդէն մեծ եւ բարգաւաճ պետութիւն էր դարձել ԺԲ. դարի վերջին քառորդին. Լեւոն Բ. մէկն էր շրջապատի հզօր իշխաններից, որ եւ արքայական թագով պսակուեցաւ Հենրիկոս Զ.-ից եւ Բիւզանդական Ալէքս Կայսրից 1195–1197 թուին, իսկ թագադրութեան հանդէսը կատարուեցաւ 1198-ին: Նորա տէրութեան սահմաններն էին «ի դրանց Սելեւկիոյ մինչ ի դրունս Անտիոքայ, եւ ի ծովեզերաց այնր երկայնութեան՝ մինչեւ ի Տաւրոս եւ յԱնտիտաւրոս, հատանելով զաշխարհս Պամփիւլիոյ, Իսաւրիոյ, Լիկայոնիոյ, Կատոնիոյ եւ Գերմանիկիոյ»:* Մի մեծ եւ բարգաւաճ պետութիւն, մէջն ունենալով եւ Լամբրոնի իշխանութիւնը, որ Ռուբինեաններից յետոյ, հզօրագոյնն էր Հայ փոքրիկ իշխանութիւնների մէջ:

Արեւմուտք էր փոխադրուած Հայ իշխանութիւնների մնացորդների հետ նաեւ կաթողիկոսական աթոռը, հաստատուելով երբեմն Ծովք գղեակում եւ ապա Հռոմկլայում: Միջին դարերում արուեստի եւ քաղաքակրթութեան գլխաւոր աղդակներն էին եւ հովանաւորները եկեղեցական եւ իշխանական դասակարգերը, ըստ այդմ էլ, տեսնում ենք, Կիլիկիայում յառաջ են գալիս գիտութեան եւ արուեստի երեք մեծ կեդրոններ՝ Դրազարկը, Հռոմկլան եւ Սկեւռան. հայ իշխանութիւնների ուռճացման եւ քաղաքական ու եկեղեցական ազատ կեանքի տիրապետութեան հետ: Դրազարկը իշխանական եւ թագաւորական տան, Սկեւռան Լամբրոնացիների, իսկ Հռոմկլան հայրապետական աթոռի: Դրազարկի հետ պէտք է մի համարել Գռների եւ Ակների վանքերը, որ ԺԳ. դարում ծաղկեցան, յատկապէս, Յովհաննէս արքայեղբօր առաջնորդութեամբ, բայց ազդուած Հռոմկլայի դպրոցի կողմից: Առ հասարակ այս երեք դպրոցն էլ իրենց առանձնայատկութիւններն ունենալով, բոլորովին ուրոյն ճանապարհներով չեն ընթանում, այլ փոխադարձ յարաբերութեամբ պահպանւում է ամենքի համար էլ ընդհանուր բնոյթը:

Այսպիսի հասկացողութեամբ մենք կարող ենք կիլիկեան մանրանկարչական արուեստի երեք մեծ դպրոցների մասին խօսել, եթէ կամենում ենք նորա զարգացման ընթացքն հասկանալ այդ շրջանում:

Բայց այս յօդուածի նպատակը չէ կիլիկեան շրջանի արուեստի մասին խօսել իւր ամբողջութեամբ եւ ոչ էլ այդ դպրոցների ծագման, զարգացման եւ նրանց ստեղծագործութիւնների պատկերը տալ, այլ միմիայն շօշափել Հռոմկլայի դպրոցի այն երեւոյթները, որոնք կապուած են Կոստանդին Կաթողիկոսի անձի եւ կաթողիկոսական աթոռի հետ, համեմատ մեր ընտրած վերնագրին:

* * *

Բայց տեսնենք ո՞վ է Կոստանդին Կաթողիկոսը: Տարաբաղդաբար նորա պատանեկութեան եւ երիտասարդական կրթութեան եւ գործունէութեան մասին շատ բան չունինք ասելու: Ժամանակակից պատմիչները այդ մասին տեղեկութիւն չեն տալիս, համեմատաբար սակաւախօս են նոյն իսկ նորա կաթողիկոսական գործունէութեան մասին, որ մասամբ լրանում են ձեռագիրների յիշատակարանների տուած տեղեկութեամբ: Կաթուղիկոսութիւնից առաջ գիտենք, որ նա Մլիճի առաջնորդն էր իբրեւ եպիսկոպոս, ըստ Միքայէլ Ասորու թարգմ. յիշատակարանի, դուցէ, եւ Բարձրբերդի, որ մօտ էր նորան, ուր եւ ծնուած էր: Վարդան պատմիչ նորա մտերիմ բարեկամը, ուրեմն, եւ լաւագոյն ծանօթը նորա կեանքի եւ գործունէութեան, զլանում է մանրամասնութիւններ տալ. ընտրութեան առթիւ միայն, որ կատարուեցաւ Հայոց 669 եւ Փրկչական 1221 թուին, յայտնելով՝ «ոչ յարենէ եւ կամ ի պատուոյ, կամ ի մանոնայէ, այլ ի շնորհաց Հոգւոյն կոչեցեալ, եւ յամենայն լեզուաց վկայեալ»:* Նոյն բնորոշումը տալիս է նաեւ մահուան առթիւ, Հայոց 716 եւ փրկչական 1267 թուին. «Մերացեալ եւ լի աւուրքք ըստ մարմնոյ, եւ առաւել եւս ըստ հոգւոյ եւ ըստ կամացն Աստուծոյ, յորովայնէ ընտրեալ եւ ընդ ամենայն աստիճանս յառաջանալով անցեալ, ամենեքումբ հաճոյեացեալ, յամենայն

---

*Ալիշան. Սիսուան 460:

*Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862, 141–2: